ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 22

## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ.-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու 2017թ.-ի թիվ 7 նիստի հետևյալ օրակարգը.

- ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ. Խ.ՊՈՂՈՍՅԱՆ/
- ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ.-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /ԶԵԿ.Ն.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
3. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
4. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
5. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՄԻՆԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 23

### ՄԽՉՅԱՆ ՀԱՆԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19/01/2017Թ.-Ի ԹԻՎ 4 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Մխչյան համայնքի ավագանու 2017թ.-ի հունվարի 19-ի <<ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 4 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

<<Համայնքի գույքի կառավարում>> ծրագրի 2.-ից հետո ավելացնել.

<< 3 .Համայնքապետարանի ծառայողական ավտոմեքենայի մաշվածությունը /արտադրությունը՝ 2006թ./ և վառելիքի ծախսը՝ կախված մակնիշից /ԳԱԶ 3102/, ներկա պայմաններում ավտոմեքենայի շահագործումը դարձնում է ոչ արդյունավետ և ոչ նպատակահարմար, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել նոր ծառայողական ավտոմեքենա , որի ամորտիզացիոն ծախսերը և վառելիքի ծախսը կլինի առավել նվազ, ինչն էլ կհանգեցնի համայնքի վարչական բյուջեի զգալի խնայողությունների:

Բացի դա , առկա ծառայողական ավտոմեքենայի օտարման դեպքում , համայնքի բյուջեն կլրացվի որոշակի զգալի եկամուտներով:Մանրամասն՝ Ծրագրի անձնագիր-$4^{1}$ >>

<<Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը>> ծրագրի 1.-ից հետո ավելացնել.

<<2. Մանկապարտեզի գույքի արդիականացում

ծրագրի շրջանակներում նախատեսվող համայնքի մանկապարտեզի գույքի արդիականացման ծրագրով նախատեսվում է ձեռք բերել հետևյալ գույքը.
ա/ գազօջախ /6 այրիչով և էլեկտրական վառարանով 2017թ.-ին, 1700000 դրամ/
բ/ ծածկոցներ 120 կոմպլեկտ /2018թ.-ին, 1400000 դրամ/
գ/ լվացքի մեքենա /2019թ.-ին, 300000 դրամ/
դ/ չորանոց /2020թ.-ին, 300000 դրամ/
որը կնպաստի ունենալ ժամանակակից տեխնիկայով և գույքով ապահովված մանկապարտեզ: Ծրագրի շահառուներն են Մխչյան և հարակից համայնքների երեխաները: *Մանրամասն՝ Հավելված 1՝Ծրագրի անձնագիր-5[1]*

3. Երաժշտական դպրոցի գույքի արդիականացում

ծրագրի շրջանակներում նախատեսվող համայնքի երաժշտական դպրոցի գույքի արդիականացման ծրագրով նախատեսվում է ձեռք բերել հետևյալ գույքը.
ա/ համակարգիչ / 2017թ.-ին, 270000 դրամ/
բ/ դաշնամուրներ /2018թ.-ին, 1500000 դրամ/
գ/ կահույք /2019թ.-ին, 1500000 դրամ/
որը կնպաստի ունենալ ժամանակակից տեխնիկայով և գույքով ապահովված երաժշտական դպրոց: Ծրագրի շահառուներն են Մխչյան և հարակից համայնքների երեխաները: *Մանրամասն՝ Հավելված 1՝Ծրագրի անձնագիր-5[2]*>>

Ինչպես նաև հավելված1-ում ավելացնել <<*Ծրագրի անձնագիր-5[1]* ,*Ծրագրի անձնագիր-5[2]*,*Ծրագրի անձնագիր-4[1]*>>: /կցվում է/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
3. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
4. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
5. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ-4

## «Ծառայողական ավտոմեքենայի օտարում և նորի ձեռքբերում»

(Ծրագրի անվանումը)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքապետարանի աշխատանքների կազմակերպումը</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Վարչական բյուջեի խնայողություն</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>50000</td><td>50000</td><td>500000</td><td>500000</td><td>450000</td><td>400000</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1. Մաշված ավտոմեքենայի օտարում</td></tr>
<tr><td rowspan="3">Գույքի օտարումից եկամուտ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>1000000</td><td>0</td><td>0</td><td>0</td><td>0</td></tr>
<tr><td colspan="7">2. Նոր ավտոմեքենայի ձեռքբերում</td></tr>
<tr><td rowspan="3">Բյուջեի ծախսերի խնայողություն</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>0</td><td>1%</td><td>1%</td><td>0.5%</td><td>0.5%</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Ավագանու որոշման կայացում<br>1.2. Ավտոմեքենայի օտարում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Նոր ավտոմեքենայի ձեռքբերում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝<br>Կապիտալ ծախսեր՝ 9000000 դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 2900000 դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">ֆինանսական</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Պետական ֆինանսավորման բացակայություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքապետարանի աշխատակազմ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">01/2017 -12/2018</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքապետարանի ծառայողական ավտոմեքենայի շահագործումը մաշվածության պատճառով անարդյունավետ է: Խիստ կարիք է զգացվում նոր ծառայողական ավտոմեքենայի ձեռքբերումը, որը կխնայի ժամանակ և ֆինանսական միջոցներ:</td></tr>
</table>

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ · 04200512 ·

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ – 5[1]

### «ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՒՅՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ»

(Ծրագրի անվանումը)

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Մանկապարտեզը դարձնել օրինակելի և գրավիչ | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Արդիականացնել մանկապարտեզի հնամաշ գույքը | | | | | |
| | Հնամաշ գույքի փոխարինումը նորով (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2020 |
| | | 15 | 35 | 50 | 65 | 80 | 100 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Պահանջվող նորմատիվներին համապատասխան և անհրաժեշտ գույքի ձեռք բերում | | | | | |
| | Պահանջվող գույքի ձեռքբերման համար տրվող դրամական միջոցներ (տարեկան/դրամ) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 1700000 | 1400000 | 300000 | 300000 | 500000 |
| | 2. Նոր և արդիական գույքի մակարդակը ըստ տարիների | | | | | |
| | Արդիականացման մակարդակը (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 20% | 30% | 45% | 60% | 75% | 90% |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Առաջին անհրաժեշտության և հնամաշ գույքի փոխարինումը նորով<br>1.2. Մննդի անվտանգության հետ կապված անհրաժեշտ գույքի ձեռքբերում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Նոր և արդիական գույքի ձեռքբերում<br>2.2. Ժամանակակից տեխնոլոգիաներին համապատասխան գույքի ձեռքբերում | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 4200000 դրամ՝ 5 տարվա կտրվածքով<br>Կապիտալ ծախսեր՝<br>Ընդհանուր բյուջեն՝ 4200000 դրամ՝ 5 տարվա կտրվածքով | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Նյութական | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Պետական ֆինանսավորման բացակայություն | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի մանկահասակ երեխաները | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017- 2021 թթ. | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Մխչյան համայնքի գեղեցիկ վերանորոգված մանկապարտեզը առավել արդիական և արդյունավետ դարձնելու նպատակով առաջիկա տարիներին նախատեսվում է կառուցել նոր մասնաշենք ապահովել նոր և արդիական գույքով այն դարձնելով մարզի օրինակելի մանկապարտեզներից մեկը:<br>Ծրագիրը նպատակ է հետապնդում նպաստել մատաղ սերնդի առողջ ապրելակերպին և ճիշտ զարգացմանն ու կայացմանը: | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ - 5²

## «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԳՈՒՅՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ»

(Ծրագրի անվանումը)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Երաժշտական դպրոցը դարձնել օրինակելի և գրավիչ | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Արդիականացնել երաժշտական դպրոցի հնամաշ գույքը | | | | | | |
| | Հնամաշ գույքի փոխարինումը նորով (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2020 |
| | | 15 | 35 | 50 | 65 | 80 | 100 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 3. Համապատասխան և անհրաժեշտ գույքի ձեռք բերում | | | | | | |
| | Պահանջվող գույքի ձեռքբերման համար տրվող դրամական միջոցներ (տարեկան/դրամ) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 270000 | 1500000 | 1000000 | 300000 | 500000 |
| | 4. Նոր և արդիական գույքի մակարդակը ըստ տարիների | | | | | | |
| | Արդիականացման մակարդակը (%) | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 20% | 30% | 45% | 60% | 75% | 90% |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Առաջին անհրաժեշտության և հնամաշ գույքի փոխարինումը նորով<br>1.2. Անհրաժեշտ երաժշտական գործիքների ձեռքբերում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Նոր և արդիական գույքի ձեռքբերում<br>2.2. Ժամանակակից տեխնոլոգիաներին համապատասխան գույքի ձեռքբերում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 3570000 դրամ՝ 5 տարվա կտրվածքով<br>Կապիտալ ծախսեր՝<br>Ընդհանուր բյուջեն՝ 35700000 դրամ՝ 5 տարվա կտրվածքով | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Նյութական | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Պետական ֆինանսավորման բացակայություն | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի և հարակից համայնքների երեխաները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017- 2021 թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Մխչյան համայնքի երաժշտական դպրոցը առավել արդիական և արդյունավետ դարձնելու նպատակով առաջիկա 5 տարիներին նախատեսվում է ապահովել նոր երաժշտական գործիքներով և նոր գույքով ու տեխնիկայով այն դարձնելով մարզի լավագույն երաժշտական դպրոցներից մեկը:<br>Ծրագիրը նպատակ է հետապնդում նպաստել մատաղ սերնդի հոգևոր հարստացմանը և լավ ճաշակի զարգացմանն ու կայացմանը: | | | | | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2014թվականի N 24

### ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ.-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 5-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Մխչյան համայնքի 2017թ-ի վարչական բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Մխչյան համայնքի 2017թ.-ի ֆոնդային բյուջեի կառավարման մարմնի պահպանում ծրագրի /01.01.01.51/ գործառնական դասակարգման5122 / վարչական սարքավորումներ/ հոդվածից պակասեցնել 4000000 /չորս միլիոն/ դրամ և ավելացնել մայրուղիների և փողոցների վերանորոգում և հիմնանորոգում ծրագրի /04.05.01.58/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և կառույցների կապիտալ վերանորոգում/ հոդվածին:

2. Մխչյան համայնքի 2017թ.-ի վարչական բյուջեի պահուստային ֆոնդ ծրագրի /11.01.02.51/ գործառնական դասակարգման 4891 /վարչական բյուջեի պահուստային ֆոնդ/ հոդվածից պակասեցնել 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ և ավելացնել Սոցիալապես անապահով անձանց աջակցության ծրագրի /10.07.01.54/ գործառնական դասակարգման 4729 /այլ նպաստ բյուջեից/ հոդվածին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
3. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ
4. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
5. ՂԱՆԻԹԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ